— Ուզում էի քեզ սպանել, — պատասխանում է աւազակը եւ, չոքելով նրա առջեւ, գրկում է նրա ոտները:

— Ինչո՞ւ չսպանեցիր, — հարցնում է Հայրիկը վեր բարձրացնելով նրան:

— Աստուած իմ ձեռքը բռնեց, — ասում է քուրդը եւ սկսում է պատմել, թէ որպէս Հայրիկի թշնամիները կաշառեցին նրան, եւ որպէս ինքը խոստացաւ կատարել այդ եղեռնագործութիւնը, բայց խղճի ձայնը ասաց նրան, թէ պէտք չէ սուր բարձրացնել, աստուծոյ օրհնեալի վրայ:

— Դու էլ օրհնեալ լինիս, որդի, — ասում է նրան Հայրիկը: — Գնայ խաղաղութեամբ, բայց այդ բոլորը, ինչ որ պատմեցիր ինձ, ուրիշ ոչ ոքի չպիտի յայտնես:

— Դու խնայո՞ւմ ես քո թշնամիներին, — հարցնում է աւազակը զարմանալով:

— Աստուած այդպէս է պատուիրում, — պատասխանում է Հայրիկը:

Բայց, չնայելով Հայրիկի պատուերին, քուրդը ամէն տեղ պատմում է նրա կեանքի դէմ դաւադրութիւն սարքող անձինքների անունները, եւ այդ լսում է ամբողջ քաղաքը:

— Ովքե՞ր են այդ դաւաճանները, — հարցրեց Ասլանը:

— Մի քանի եկեղեցականներ, միացած մի քանի աղաների հետ, որոնց պարագլուխն է մեր քաղաքի սրբազան առաջնորդը, — պատասխանեց աբեղան:

— Ինչ՞ն էր առիթ տուել նրանց՝ մինչ այդ աստիճան անիրաւութեան դիմել, թափել տալով մի անմեղ արիւն, — հարցրեց Ասլանը փոքր-ինչ զայրացած ձայնով: — Միթէ՞ դպրոցը, լոյսը, կրթութիւնը այդքան ատելի է նրանց:

— Ես չեմ կարծում, — ասաց աբեղան, — որ նրանք լուսաւորութեան թշնամի են եւ այդ պատճառով զինուորւում են նրա տարածողների դէմ: Նրանք չեն կարող թշնամի լինել լուսաւորութեան, որի մասին ամենեւին հասկացողութիւն չունեն, որի վրայ երբեք չեն մտածել: Խնդիրը բոլորովին տնտեսական է: Մի ժամանակ, որպէս քանի որպէ առաջ ասեցի, այդ վանքում կանոնաւոր տնտեսութիւն չկար. նրա եկամուտները վատնում էին միաբանները, եւ ինչ էլ որ մնում էր, առաջնորդի կոկորդովն էր անցնում: Բայց երբ Հայրիկը վանահայր դարձաւ, նախ վանքը մաքրեց անպիտան միաբաններից, նրանց փոխարէն խմբեց այստեղ աւելի արժանաւոր անձինք, եւ այնուհետեւ վանական արդիւնքները սեփականացրեց իր նոր կառուցած հիմնարկութիւնների պահպանութեան համար: Այդ բոլորից յետոյ, շատ բնական է, որ այն